



ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԻՆՉՊԵՐՍ ՊԵՏՔ Է ԹԱՆԳԱՐԱՆԸ ԿԵՐԱԲԱՑՎԻ COVID-19-ՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Սույն ուղեցույցը մշակվել է առ այսօր հրապարակված հոդվածները, ուղեցույցները և ծրագրերը ուսումնացիրելու արդյունքում՝ հաշվի առնելով մեր երկրում գործող առանձնահատկությունները: Հիմանական աղբյուրն է. **artnet**news

Հրապարակվել է ուրբաթ օրը՝ 2020թ. հունիսի 19-ին:

Աշխարհում տիրող ճգնաժամի երկարացման պայմաններում մշակութային հաստատությունները, ինչպես բազմաթիվ այլ երկրներում, այնպես էլ Հայաստանում, փորձում են հասկանալ, թե ե՞րբ և ինչպե՞ս կարող են վերաբացել իրենց դռները հանրության առաջ: Ակնհայտ է, որ վերաբացումից հետո նրանք գործելու են նոր պայմաններում: Գործողությունները հաջողությամբ վերսկսելու համար նրանց անհրաժեշտ է ոչ միայն նվազագույնի հասցնել COVID-19-ով վարակվելու ռիսկերը այցելուների, անձնակազմի և կամավորների համար, այլև երեք կողմերի շրջանում ապահովության վստահություն ներշնչել:

Մասնագիտական և ոլորտային կառույցները, ներառյալ Ամերիկյան թանգարանների ասոցիացիան (AAM), Արվեստի թանգարանների ասոցիացիան (AAMD), Թանգարանների միջազգային խորհուրդը (ICOM), Հուշարձանների տեսարժան վայրերի միջազգային խորհուրդը (ICOMOS) և Ժամանակակից արվեստ թանգարանների և հավաքածուների միջազգային կոմիտեն (CIMAM), նախնական ցուցումներ են հրապարակել:

©Սույն ուղեցույցը թարգմանվել, լրամշակվել և տեղայնացվել է հաշվի առնելով հայաստանյան իրավիճակը ՀՀ ԿԳՄՄՆ-ի, ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտեի և ՌՕՔԵՄՓ մշակութային ժառանգության տարածաշրջանային կենտրոնի համագործակցությամբ:



ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ ՊԼԱՆԱՎՈՐԵԼՈՒ ԳՈՐԾԻՔ

1. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Առաջնությունների ու դերերի սահմանում

- Մոտակա, միջնաժամկետ և հեռավար նպատակները պարզելու համար կազմավորել վերաբացման խնդրով զբաղվող օպերատիվ խումբ՝ հարկ եղած դեպքում իր ենթախմբերով
- Հաշվի առնել վարակի տարածման ազդեցությունը անձնակազմի վրա. օրինակ՝ առողջապահության և անվտանգության կանոնների պահպանմանը հետևող մասնագետների ներկայության անհրաժեշտությունը; մարդկային տեղաշարժով ծանրաբեռնված հատվածներում զգոնության բարձրացվածությունը; ախտահանելու և քերամաչափելու ուժեղացված հսկողությունը; մասամբ վերաբացվելու դեպքում առաջնագծում գտնվող աշխատակիցների վրա եղած ազդեցության հետազոտումը
- Հաշվի առնել թանգարանի տարածքում ուժեղացված բժշկական օգնություն ցուցաբերելու հնարավորությունը (օրինակ՝ բժշկի կամ բուժֆույրի առկայությունը համապատասխան կանչի դեպքում)
- Դիտարկել գրասենյակում “A” և “B” (հնարավոր է նաև “C”) միմյանց փոխարինող խմբեր ստեղծելու հնարավորությունը՝ մինչ մնացած աշխատակիցները գտնվում են տանը սոցիալական հեռավարության հաղորդակարգերը/ արձանագրությունները ապահովելու նպատակով
- Ձևավորել ճկուն մարդկային ռեսուրսների կառավարման ռազմավարություններ, որոնք օպտիմալ կերպով են տեղաբաշխում անձնակազմին՝ ողջամիտ գիշումներ կիրառել այն աշխատակազմիցների նկատմամբ, ովքեր գտնվում են ռիսկային խմբում կամ նրանց համար, ովքեր ինչ-ինչ պատճառներով չեն կարող վերադառնալ աշխատանքի:
- Հաշվի առնել հանրային առողջության ուղեցույցները, աշխատանքային օրենսդրությունը և ՀՀ պարետատան [ցուցմները](#)
- Դիտարկել անձնակազմի պարտադիր և կամավոր դասընթացների անցկացումը
- Կազմել անվտանգություններ այն դեպքերի համար, երբ այցելուի ինքնազգացողությունը վատանում է թանգարանում կամ, եթե վարակակրի ներկայությունը թանգարանի տարածքում հաստատված է (ախտահանում; ծանուցում վարակի հետ հավանականորեն առնչված անձնակազմի և, սոցիալական մեդիաների միջոցով, այցելուների մասին; կոնտակտավորների հայտնաբերում)



- Ըստ անհրաժեշտության կազմել արձանագրություն ապատեղեկատվության բնույթ կրող դեպքերի մասին:

Աշխատողի առողջության ապահովում

- Կիրառել աշխատակցի անձը հաստատող փաստաթղթի առկայության պարտադիր լինելու պայմանը՝ անհրաժեշտության դեպքում աշխատակցին(ներին) համապատասխան իրավիճակի հետ կապված նույնականացնելու համար: Սա կարևոր է վարակի դեպքերի արձանագրման դեպքում, հնարավոր կոնտակտավորների հայտնաբերման համար
- Ուսումնասիրեք կանոնավոր և հասանելի թեստավորման հնարավորությունը՝ լինի տեղում, թե տեղական առողջապահական գործընկերների հետ համագործակցությամբ
- Դիտարկել հոգեբանական խորհրդատվության տրամադրման և հեռավար բժշկության տարբերակները, ներառյալ հեռավար աշխատողի աջակցման ծրագիրը
- Արձագանքել գաղտնիության, անպաշտպանվածության վերաբերյալ աշխատողի մտահոգություններին
- Կա՛մ փակել անձնակազմի համար նախատեսված ճաշարանը, կա՛մ ապահովել սննդի մատուցումը փաթեթավորված ձևով
- Սահմանափակել և սահմանել այն վայրերը, որտեղ անձնակազմը կարող է հավաքվել (սահմանաբաժանել սենյակները, վերելակները և այլն)
- Դադարեցնել ընդհանուր կիրառության առարկաների օգտագործումը և ըստ հնարավորության մշակել պատշաճ ախտահանման արձանագրություններ
- Սահմանափակել ավտոմեքենայի ծանրաբեռնվածությունը՝ մինչև օրինակ մեկ վարորդ և մեկ ուղևոր
- Դիտարկել դեպի աշխատավայր և աշխատավայրից տուն տեղափոխման արձանագրությունների կազմումը, եթե մարդիկ օգտվում են հանրային տրանսպորտից

Ծանոթացումը նոր գործող հաղորդակարգերին

- Նախապատրաստել անձնակազմին հանրության հետ շփմանը, ներառյալ հանրության այն անդամների հետ շփման պարտականություններին և հաղորդակարգերին, որոնք կանոններին չեն ենթարկվում



- Պարբերաբար կազմակերպել կողմնորոշման համար հանդիպումներ և ապահովել գործիքակազմ տեղեկատվության անընդհատ փոխանակման համար
- Տրամադրել պաշտպանական միջոցներ և սովորեցնել օգտվել դրանցից
- Մշակել նախնական խորը ախտահանման և հետագայում ուժեղացված ախտահանման ռազմավարություն. վերլուծել անձնակազմի և այցելուների հպվելու մակերեսները, ինչպիսիք են գրասեղանները, համակարգիչները, հեռախոսները, աստիճանագոգերը, վերելակի կոճակները, ախտահանել հպումով աշխատող Էկրանները և սանհանգույցները (զուգարանախցիկների դռների սողնակները, ձեռքի չորացուցիչները և այլն)
- Նվազագույնի հասցնել անձնակազմի ճամփորդելը և դիտարկել անձնակազմի ճամփորդելու ժամանակավոր դադարեցումը՝ վերաբացումից անմիջապես հետո սահմանված ժամանակահատվածում

2. ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Թանգարանային տարածքի նախապատրաստումը և գործնական քայլերի պլանավորում

- Իրականացնել տարածքի աուդիտ գնահատելու համար հեռավորության պայմանների ներգործությունը
- Իրականացնել այցելուի և աշխատանքային տարածքի ռիսկերի գնահատում համաձայն [OSHA-ի](#) (Աշխատանքի պաշտպանության վարչության) ուղեցույցի
- Դիտարկել հատուկ հասանելիությամբ վայրերի առկայությունը տարեց և խոցելի խմբի այցելուների համար
- Վերանայել աշխատանքային ժամերը, այդ թվում սահմանելով հատուկ հասանելիության ժամեր տարեց և խոցելի խմբի այցելուների համար, և փոփոխել հատուկ անդամակցություն ունեցողների այցելության ժամերը
- Սահմանափակել աշխատանքային ժամերը ախտահանման համար բավարար ժամանակ ապահովելու համար
- Նխագծել այցելությունն այնպես, որ երթուղին ընթանա մեկ ուղղությամբ
- Դիտարկել փուլային վերաբացում՝ ընդարձակելով բաց տարածքների հետագիծը ժամանակի ընթացքում



- Որոշել, թե որ ցուցասրահները/ տարածքները/ վերելակները հասանելի չեն լինի հանրությանը
- Որոշել, թե որ արվեստի գործերը/ինստալյացիաները հասանելի չեն լինի հանրությանը
- Տեղորոշել իրենց այցելության ընթացքում վատառողջ այցելուների համար նախատեսված «հիվանդների սենյակը»
- Ձգտել հետևել [ADA-ի](#) «Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին» ակտի ուղեցույցին, երբ իրականացվում են այս միջոցառումները

Պաշտպանական միջոցների փիջնպատերի տեղադրում

- Աշխատել վարակիչ հիվանդություններով և աշխատողների պաշտպանությամբ զբաղվող փորձագետների հետ խորհրդրատվությամբ՝ թանգարանի տարածքները վերաձևավորելու ժամանակ
- Վերադասավորել աշխատանքային տարածքները աշխատողների միջև հեռավորություն ստեղծելու համար
- Ձեռք բերել կամ պատրաստել օրգանական ապակուց սահմանաբաժանումներ ընդունարանի սեղանին, գրասենյակի խցիկների մոտ, թանգարանի հուշանվերների խանութներում
- Ապահովել պատնեշագոտիներ և խոչընդոտներ սոցիալական հեռավորություն ապահովելու համար
- Հատակին իրականացնել գծանշումներ՝ ապահովելու սոցիալական հեռավորության պահպանման մասին իրազեկումը և կողմնորոշումը, որտեղ դա օգտակար է
- Արգելել սարքերի ընդհանուր օգտագործումը (օրինակ՝ աուդիո գիդերի) ըստ անհրաժեշտության
- Ապահովել տոմսերի վաճառքը անհպում՝ սահմանափակելով կանխիկ դրամի փոխանակումը

Հիգիենայի և ախտահանման ծավալների ընդլայնում

- Իրականացնել արդիացված ախտահանման ռազմավարություն



- Ճշտել [CDC-ի](#) (Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի) կողմից հաստատված, բժշկական և երեխաների համար ապահով ախտահանիչ միջոցները, որոնք նաև թունավոր չեն արվեստի գործերի համար
- Տեղադրել ձեռքի ախտահանիչներ մուտքերի մոտ, ներքին տարածքի խաչմերուկներում, սանհանգույցներում, հուշանվերների խանութներում և ռեստորաններում/ սրճարաններում
- Առդիտ իրականացնել և փոխել կամ պարբերաբար ախտահանել պլաստիկ և չժանգոտվող պողպատյա մակերեսները, որոնք կարող են պահպանել վիրուսը
- Թուլատրելի տեղերում կիառել մանրէասպան կապույտ լույս արձակող սարքեր
- Կիրառել հակաբակտերիալ հատակի գորգեր
- Ապահովել պաշտպանիչ միջոցների բավարար մատակարարումը, ինչպիսիք են օրինակ՝ ալկոհոլը, օճառը, թաց անձեռոցիկները, էլեկտրոստատիկ սփրեյերը, ուլտրամանուշակագույն լույսերով ախտահանիչները
- Հաշվի առնել գրասենյակներում և հանրային գործածության տարածքներում թարմ օդի հարաբերակցության բարձրացումը վերաշրջանառվող օդի համեմատ՝ ապահովելով անընդհատ օդափոխություն

Ցուցանակների տեղադրում

- Հստակորեն հրապարակել մուտք գործելու կանոնները, կողմնորոշիչ նշանները և ախտահանման մասին արձանագրությունները
- Ապահովել հատակին համապատասխան պիտակներ, որոնք նշում են պատշաճ հեռավորությունը
- Տեղադրել պատի կողմնորոշիչ նշանները և հեռավորությունը պահպանելու հիշեցումները ողջ հանրային տարածքով
- Տեղադրել հերթում հեռավորություն պահելու հիշեցման համար նշանները
- Փակցնել արտաքին կողմնորոշիչ նշաններ նախնական հասանելիության վայրերում
- Դիտարկել հպման միջոցով աշխատող էկրանների հարմարեցումը ձայնային կամ շարժման միջոցով ակտիվացող սարքերին



3. ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Համագործակցություն

- Ապահովել հատուկ միջոցառումներ ADA-ի և OSHA-ի ուղեցույցերին չհետևելու դեպքում, ներառյալ այն հարցերին, որոնք վերաբերում են խտրական վերաբերմունքի դրսևորումներին
- Համակարգել վերաբացման ռազմավարությունները և հաղորդակցման լեզուն տեղական/շրջանային մշակութային կազմակերպությունների հետ առավելագույնս արդյունավետ հաղորդակցություն ապահովելու համար

Իրավական և պայմանագրային նախապատրաստություններ

- Սահմանել պատասխանատվության հարցի շուրջ առաջացած դատական հայցերի փոխհատուցման մակարդակը, վերանայել ապահովագրության ռազմավարությունները և կատարել փոփոխություններ, ըստ անհրաժեշտության
- Ապահովել ֆորս մաժորային իրավիճակների ծախսերի հոգումը ապահովագրության միջոցով
- Բժշկական խնդիրների և բժշկական տեղեկատվություն ստանալու վերաբերյալ այցելուներին ներգրավելու համար մշակել ռազմավարություններ և գործողությունների սցենար

Հանրության իրազեկում

- Տպագրել և բացատրել նոր ընթացակարգերը և հաղորդակարգերը բոլոր մեդիա կապի միջոցներով ակնկալիքները կառավարելու համար՝ այդ թվում տվյալների պահպանությունը և արձևագրությունների պահոցը
- Ձևավորել թիրախավորված հաղորդակցման միջոցները (սոցիալական, լրագիր, վեբ միկրո-կայք) համավարակի հետ առնչվող տեղեկատվությունը համախմբելու և թարմացումների տրամադրման համար
- Դիտարկել թանգարանի դերը ավելի ընդհանրական առումով՝ որպես հանրային տեղեկատվության վայր, հանրային առողջության հետ հարաբերակցության մեջ
- Հստակորեն նշել խմբային այցելությունների դեպքում մարդկանց ընդունելի քանակի հետ կապված ռազմավարությունը



- Ձևակերպել զգուշացումներ հանրությանը՝ համավարակին դիմագրավելու կարգավիճակի մեջ եղած փոփոխությունների մասին, ծանուցելու համար
- Դիտարկել թեժ գծի հնարավորությունը հետադարձ կապ ապահովելու համար և առաջացնել վստահություն ինստիտուցիոնալ պատասխան տրամադրելու հարցում

4. ԲԱՅ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Բաց տարածքում մարդկանց կուտակման կառավարման համակարգում

- Որտեղ հնարավոր է, սահմանափակել թանգարանի տարածքի տրամագծով մարդկանց ժամանումը
- Տեղադրել նշաններ կայանատեղիների ողջ տարածքով, որոնք մարդկանց իրենց սպասված լինելու զգացողություն են հաղորդում, բայց նաև հիշեցնում են նրանց սոցիալական հեռավարությունը պահելու անհրաժեշտության մասին
- Եթե հնարավոր է՝ մշտադիտարկել այդ տարածքները այնպես, որ ակնկալիքները կառավարվեն ի սկզբանե
- Կազմակերպել եղանակի փոփոխություններից պաշտպանված տարածք հերթում կանգնած մարդկանց համար
- Մշակել՝ թանգարանի տարածքի նախագծմանը և գոյություն ունեցող ենթակառուցվածքին համապատասխանող, սոցիալական առումով հեռավար, փուլային մուտք կատարելու հաղորդակարգ

Բացօթյա արվեստի ծրագրերի առաջարկի ձևավորում

- Նախագծել և հարմարեցնել ինքնուրույն կատարվող արվեստային շրջայցերը (որտեղ հնարավոր է)
- Նշել պիկնիկի և հանգստի համար նախատեսված տարածքները

Կայանատեղիի + կայանման կառուցվածքների հարմարեցում

- Ըստ անհրաժեշտության սահմանափակել կայանման հնարավորությունը այցելուների թվի նվազեցման նպատակով
- Վերակազմակերպել նոր ազատված կայանատեղիի տարածքը նոր այցելուի սպասարկման համար
- Դիտարկել ժամանակի հաշվարկով կայանատեղիի ամրագրման համակարգի ներմուծումը



Ժամանակավոր կառույցների տեղադրում

- Կազմակերպել այցելուի կողմնորոշման և դիմավորելու համար վրան
- Տեղադրել ախտահանող հարմարանք (սարք)

5. ԺԱՄԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ներհոսքի նվազեցում

- Դիտարկել այցելությունների առցանց / հեռավար նախապես գրանցման հնարավորությունը միավոր ժամանակի հաշվարկով (և ժամանակով սահմանափակված) և բացառել կամ սահմանափակել վերելակի օգտագործումը
- Հաստատել և ապահովել առավելագույն այցելություն (օրինակ՝ մեկ այցելու 150 քառակուսի մետրի համար)՝ հաշվի առնելով, որ այս ցուցանիշը կարող է տարբերվել
- Դիտարկել «փորձնական բացման» հնարավորությունը անդամակցություն ունեցողների կամ այլ խմբերի համար ներհոսքի փորձարկման և գործընթացում խցանումների շտկման համար
- Եթե Ձեր թանգարանի մուտքը վճարովի է, ապա դիտարկեք ազատ մուտքով փորձնական վերաբացումը, որպեսզի փորձարկեք նեղ տարածքների կառավարումը
- Որտեղ օգտակար է և հնարավոր, իրականացնել թունելային շրջայց հավասարապես և թանգարանի զանազան հատվածներում (օրինակ՝ նշել մուտքի տոմսերով շրջայց սկսելը տարբեր վայրերից)
- Դիտարկել ինքնասպասարկման հնարավորությունը և կողավող պահարաններով հանդերձարանի հնարավորությունը

Այցելուների կողմնորոշումը ۞ տեղեկացում

- Դիտարկել աուդիո հայտարարությունների հնարավորությունը և տեղադրել ընթացակարգերը բացատրող նշաններ
- Դիտարկել բջջային շրջայցերի կամ արվեստի գործերի մեկնաբանման և տեղեկություններ ներկայացնելու համար նախատեսված բջջային հավելվածները
- Փոխարինել թղթից թռուցիկները էկրաններով ըստ հնարավորության

Պաշտպանիչ միջոցների ապահովում



- Հրապարակել/թողարկել դիմակի արձանագրություն (օրինակ՝ անձնակազմի համար պարտադիր հանդիսացող և վեց տարեկանից բարձր այցելուների համար խորհուրդ տրվող)
- Մշակել ռազմավարություն պաշտպանիչ միջոցների վերաբերյալ

Ջերմասպիում

- Օգտագործել և սովորեցնել անձնակազմին ջերմության չափման ատրճանակից օգտվել
- Եթե հնարավոր է՝ կիրառել հեռավար ջերմային սկաներները հանրային և անձնակազմի համար նախատեսված մուտքերի մոտ
- Կազմակերպել բժշկական տեսակավորման համար տարածքը (հնարավորության դեպքում շենքից դուրս գտնվող) ուղղորդելու համար բարձր ջերմությամբ այցելուների հետազազնման համար

Այցելուի տվյալների հավաքագրումը + հայտաբերում

- Դիտարկել այցելուների գրանցման և կոնտակտավորների հայտնաբերմանը ուղղված միջոցառումների որդեգրումը ընդունարաններում անհրաժեշտության դեպքում կոնտակտավորների հայտնաբերման համար

6. ՆԵՐՔԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Ֆիզիկական հեռավորության վերահսկողություն

- Հաստատել նվազագույնը վեցը ոտնաչափ հեռավորություն ընտանիքի անդամներ չհանդիսացողների միջև
- Օգտագործել հատակի պիտակները տարածքներում, որտեղ հավանական են կոնտակտներ
- Ժամանակավորապես դադարեցնել խմբային շրջայցերը և միջոցառումները մինչև հետագա ծանուցումը
- Քննադատել ներկայիս սերնդի սոցիալական հեռավորության պահպանման համար հավելվածների կենսունակությունը



Մեկ ուղղությամբ երթուղու կազմակերպում

- Սահմանել և մատնանշել մեկ ուղղությամբ ընթանալու երթուղիները միջանցքներում և ցուցասրահներում
- Սահմանել մուտք գործելու համար արգելված գոտիները, որտեղ հեռավորության պահպանումը իրագործելի չէ

Հեռավորության պահպանումը հանրային տարածքներում

- Ներդնել ուղեցույց հսկիչների համար հանրային գործածության վայրերում հեռավորության վերահսկման համար
- Կանգնեցնել հսկիչներին մեծ խաչմերուկներում ուղղորդելու համար հանրությանը դեպի չխճողված հատվածներ

Հեռավորության պահպանումը ցուցասրահներում

- Հաստատել և վերահսկել յուրաքանչյուր ցուցասրահի այցելուների նվազագույն քանակը
- Ամրագրել միջանձնային հեռավորության պահպանման վերահսկողությունը ցուցասրահի հսկիչի կամ հերթապահի պարտականություններին
- Հեռացնել նստարանները; փոխարինել հեռավորության վրա տեղադրված աթոռներով
- Ապահովել շրջելու համար բավարար հեռավորություն բոլոր արվեստի գործերի և ցուցանմուշների միջև
- Արգելել կամ փակել բոլոր հպումով ակտիվացող ցուցադրությունները/ինտերակտիվ վահանակները

7. ՆԵՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄ

Սանհանգուլցի սանիտարական պայմանների նորացում

- Գործադրել հերթապահներին և այլ համակարգեր մշտադիտարկելու համար սոցիալական հեռավորության կիրառումը և պահպանման հնարավորությունը
- Ներմուծել առանց հպման աշխատող ծորակներ և սրբիչների դիսպենսերներ
- Օգտագործել ավտոմատ ձեռքի չորացուցիչներ, որտեղ դա հնարավոր է



Ռեստորանների/սրճարանների հարմարեցում

- Փակել ռեստորանները և սրճարանները, եթե դրանք չեն կարող բավարարել այն նույն չափորոշիչները, ինչ սննդի սպասարկման այլ մատակարարները երկրում
- Սահմանել և վերահսկել առավելագույն արտադրողականության սահմանափակումը (օրինակ՝ 30-ից 60%)
- Տրամադրել փաթեթավորված լանչեր մատուցվող ուտելիքի փոխարեն
- Որդեգրել անկանխիկ վճարումների կատարումը
- Փակել բոլոր ջրային շատրվանները /պուլպուլակ/

Թանգարանի հուշանվերային խանութի վերանայում

- Սահմանել գնորդների առավելագույն քանակը միավոր ժամանակում
- Դիտարկել դիմակների և սանիտարական ու պաշտպանիչ միջոցների պաշարների ստեղծումը վաճառքի համար
- Ստեղծել ավելի շատ տարածություն անցումների միջև
- Հնարավորության դեպքում անցնել առցանց աշխատանքի
- Որդեգրել անկանխիկ վճարումներ կատարելը

Վերելակների և աստիճանների գնահատում

- Սահմանափակել փոքր վերելակների օգտագործումը՝ հասանելի թողնելով միայն անձնակազմի ու արտակարգ իրավիճակների համար
- Մատնանշել աստիճանների վրա քայլուղու ուղղությունը

Լսարանների, կրթական տարածքների և միջոցառումների տարածքների օգտագործման սահմանափակում

- Առաջարկել տուն տանելու կրթական նյութեր խմբային ծրագրերի փոխարեն
- Ժամանակավորապես դադարեցնել մեծածավալ ընդունելությունները և վարձակալմամբ անցկացվող միջոցառումները մինչև հետագա ծանուցումը:



ԱԲՅՈՒՐՆԵՐ

- ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՇՐՋԱԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԸ, 12.06.2020
 - American Alliance of Museums. *How to Get Ready to Open Doors*, April 29, 2020.
 - American Alliance of Museums. *Considerations for Museum Reopenings*, May 4, 2020.
 - American Civil War Museum. *COVID-19 Action Plan* (n.d.).
 - CIMAM. *Precautions for Museums during Covid-19 Pandemic*, April 28, 2020.
 - *Coronavirus Preparedness Community Document* (n.d.).
 - Crow, Kelly. “As Museums and Galleries Reopen, Visitors Face New Rules,” *Wall Street Journal*, May 2, 2020.
 - Cushman & Wakefield. “Recovery Readiness: A How-to Guide for Reopening your Workplace,” April 22, 2020.
 - Deloitte. *How COVID-19 is Challenging Orthodoxies in Airport Customer Experience* (n.d.).
 - IAAPA. *COVID-19 Reopening Guidance: Considerations for the Global Attractions Industry*, May 1, 2020.
 - JDSUPRA. *Preparing for Re-Entry: Key Considerations for Returning Employees to the Workplace amid the COVID-19 Crisis* (n.d.).
 - Ministero per i beni e le attività culturali e per il turismo. *Coronavirus, Franceschini: Da CDM Aitui Concreti Per Il Turismo e La Cultura* (n.d.).
 - Museum Tinguely. *COVID-19 Protection Concept* (n.d.).
 - Podos, Lisa Beth. *A Playbook for Reopening Children’s Museums Site* (n.d.).
 - Staatliche Museen zu Berlin. *Information on the Opening of Selected Museums*, May 12, 2020.
 - Theodore Gnep Kipping. “Key Post-COVID-19 Measures for Operators of Shopping Centers & Other Public Spaces,” April 28, 2020.
 - The Event Safety Alliance Reopening Guide. For Event Professionals During the Covid-19 Epidemic. Steven A. Adelman, ed. May 11, 2020.